1248 տարի և մեկ դար

Տիրան Մարության, ճարտարապետության դոկտոր

Եթե ճարտարապետությունը քարացած երաժշտություն է, ապա Թորոս ճարտարապետը այդ քարացածը վերածել էր կենդանի երգի: Նա մեր օրերի հոյակապ ավերակների և հուշարձանների նույնքան հոյակապ երգիչն է:

Ավ. Իսահակյան

Սանկտ Պետերբուրգի կայսերական ակադեմիայի հնագիտական հանձնաժողովի թույլտվությամբ և Խրիմյան Հայրիկ կաթողիկոսի հովանավորությամբ 100 տարի առաջ Էջմիածնի վարդապետ, բանասեր, հնագետ Խաչիկ Դաղյանի ղեկավարությամբ և անմիջական մասնակցությամբ սկսվեցին Զվարթնոց տաճարի պեղումները:

Զվարթնոց կամ Վաղարշապատի սուրբ Գրիգոր տաճարը, որը հայ ժողովրդի շինարարական, կառուցողական վսեմ հանճարի արտահայտությունն էր, կառուցվել էր Ներսես Գ. Տայեցի (Իշխանցի) կաթողիկոսի կողմից 640-ական թվերին և օծվել 652 թվին բյուզանդական Կոստանդ կայսեր ներկայությամբ: Զվարթնոցը կործանվել է X դարի երկրորդ կեսին: Տաճարի պիտանի քարերն օգտագործվել են այլ շինություններում, թերևս սրբարանների կառույցներում, իսկ մի մասը մոտ 1000 տարվա ընթացքում ծածկվել էր թանձր հողաշերտերով, գրեթե մոռացության մատնվել:

Խաչիկ վարդապետ Դաղյան

Զվարթնոցի ավերակները

Պատմությամբ էր միայն հայտնի, որ VII դարում կաթողիկոս Ներսես Տայեցին Էջմիածնից մոտ երկու կիլոմետր արևելք, ուր, ըստ պատմական վկայության, Տրդատ արքան դիմավորելու էր եկել Խոր Վիրապից ժամանող սուրբ Գրիգոր Լուսավորչին, կառուցել էր մի հոյակերտ տաճար, որի մասին հիացմունքով են խոսել մեր պատմիչ-ները։

Տաճարի օծումից 1248 տարի հետո Խաչիկ Դադյանը պեղում է ավերակը, հասնում տաճարի քարասալ հատակին։ Պահպանվել էին միայն տաճարի պատերի մի մասը 1-1.5 մ բարձրությամբ։

Պեղումների ընթացքում Դադյանը ստիպված էր եղել քարակրաբետոն ոչ քիչ զանգվածներ պայթեցնել, մանրացնել, որոնք շինության ներսից դուրս են տարվել որպես աղբ։ Պեղման արդյունքում բացված հատակաձևը պետք էր մասնագիտորեն թղթին հանձնել, մինչդեռ Դադյանը, չլինելով մասնագետ, չէր կարող, և ինչպես ինքն է նկատել՝ կուզեր մի լավ մասնագետ իրեն ընկերակցեր և օգներ այդ հարցում։ Նա, փաստորեն, հավիտենապես անհայտությանն է մատնել շենքի վերին մասերը ճշգրիտ պատկերելու համար անհրաժեշտ զանգվածները, մնացորդ բեկորները։

Երբ 1904 թվին Թորոս Թորամանյանը Անիից ժամանում է Էջմիածին ու ստանձնում հուշարձանի հետագա պեղումները շարունակելու պարտականությունը, գրում է. «Գուցե Խաչիկ վարդապետի մտքից անգամ չէր անցած մի ճարտարապետ հրավիրել և իրեն սովորական եղող ջղագրգիռ ոգևորությամբ տաճարին մեջը օր առաջ մաքրելու համար, մեջը թափված քարերն ու շաղախի փշրանքները դուրս թափելուց հետո, մնացած մեծազանգված փուլքերը, որոնք պիտի բնորոշեին շենքին թե՛ ներքին կազմությունը և թե՛ գմբեթի մանրամասն ձևն ու նկարագիրը, վառոդով պայթեցրել ու փոշիի վերածել էր, որովհետև այդ զանգվածները անհնար է եղել բրչով կամ լոմով մանրացնել։ Ահա այս իսկ պատճառով է, որ այդ հոյակապ տաճարին ներքին

կազմությունը բավակին ճշտված է շենքի դուրս թափված մեծ բեկորների միջոցով, սակայն ուրիշ ճարտարապետական մանրամասնությունները ընդմիշտ կորած են հուշարձանի պատմության համար»:

Այնուհետև Թորոս Թորամանյանը պեղում է տաճարի շրջապատը, կորստից փրկում դեռևս պահպանված զգալի զանգվածներ ու բեկորներ, որոնց առկայությամբ էլ հնարավոր է եղել վերակազմել ոչ միայն հատակագիծը, ինչը պահանջել է շուրջ երկու ամիս, այլև հավաստի տվյալներ է ձեռք բերել տաճարի ամբողջական վերակազ-մությունը ստեղծելու համար:

Թ. Թորամանյանը Զվարթնոցում աշխատել է շուրջ չորս ամիս, ստեղծել նրա վերակազմությունը, որն առաջին անգամ «Զվարթնոցի տաճարը» վերտառությամբ հրատարակվել է 1905 թվի «Մուրճ» ամսագրի մայիսյան համարում:

Թորոս Թորամանյան

Զվարթնոցի կառույցը մեր մյուս տաճարների համեմատությամբ բավական բարդ է, և դժվար է եղել նաև վերակազմություն ստեղծելը: Բարեբախտաբար, Զվարթ-նոցի առաջին գիտական վերակազմությունը վիճակվել էր հմուտ և նրբագույն ճաշակի տեր գիտնական, արվեստագետ, ճարտարապետ Թորոս Թորամանյանին:

Ինչպես Թորամանյանից առաջ, այնպես էլ հետո Զվարթնոցի վերակազմության փորձեր արել են նաև ուրիշները, սակայն հաջողվել է Թորամանյանին, և դա պատահական չէ, այլ կատարյալ վկայությունը նրա հիմնարար պատրաստվածության, մի բան, որ չունեին շատերը: Թորամանյանը չափագրելով ու գծագրելով Զվարթնոցի

հատակագիծը՝ առանց սխալվելու որոշել է, որ տաճարը եղել է եռաստիճան. դա թելադրում է հատակագծի մտածված դիտարկումը։

Ձախից՝ աջ. Ռաչին վարդապետ Հաղբան, Գևորգ եպիսկոպոս, Տիգրան վարդապետ, Ս. Մաշի որդին, Նիկողայոս Մաշ, Կոմիտաս վարդապետ, Մաշի կինը, Մեսրոպ արքեպիսկոպոս Տեր-Սողոմոնյան, Աշոտ եպիսկոպոս (1901 թ. Զվարթնոց)

Ինչպես արվեստագետները, ճարտարապետները ևս նախքան արվեստի գործ ստեղծելը իրենց մտապատկերում սխեմատիկորեն նախագծում են այն։ Թորամանյանը ևս նախագծել է Զվարթնոցի նախապատկերը, ընդ որում մի քանի տարբերակներով։ Դա, թերևս, պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ Թորամանյանը դեռևս վաղ հասակից հետաքրքրվել է հայ ճարտարապետությամբ ու արվեստով, ապա ապրելով Եվրոպայում՝ այցելել է հռչակավոր պատմական հուշարձաններ, թանգարաններ, ուսումնասիրել է գրականությունը։ Այդ ամենը դրոշմվել է նրա մտապատկերում, հետագայում օգնել նրան Զվարթնոցի նախապատ-կերն ստեղծելիս։ Այս մասին տողերիս հեղինակը գրել է դեռևս 1959 թվին «Մի նորահայտ վկայություն» հոդվածում («Գրական թերթ», 3 ապրիլի, համար 13), որը նվիրված էր Փարիզի Սեն Շապելի մի քանի հարթաքանդակներին՝ վերջիններիս՝ Զվարթնոցի հետ առնչություններ ունենալու կապակցությամբ։ Հիշյալ հոդվածը առիթ դարձավ, որ նույն հարցի շուրջ աշխատություններով հանդես գան ճարտարապետ

Հովհաննես Խալփախչյանը, Է. Ութուջյանը, Պատրիկ Դոնաբեդյանը, որը շրջանառության մեջ դրեց նաև Սենտ Սավենի որմնանկարը, Ստեփան Մնացականյանը, վերջապես Ալեքսանդր Մանուչարյանը, որը շրջանառության մեջ դրեց հոլանդացի նկարչի կերտած «Կամբյուսեսի դատավճիռը» նկարը։

Սեն Շապելի հարթաքանդակում, Սենտ Սավենի որմնանկարում և «Կամբյուսեի դատավճիռը» նկարում կան տարրեր, որոնք Թորամանյանը, գուցե ընդհանուր գծերով ունենալով մտապատկերում և հիմք ընդունելով Զվարթնոցի ավերակի զանգվածների ու բեկորների նյութերը, հաջողությամբ ստեղծել է Զվարթնոցի վերակազմությունը, նրա արևմտյան ճակատը. սքանչելի ստեղծագործություն, որ հիացմունք է պատճառում։



Զվարթնոց. արևմտյան ճակատ (վերակազմություն՝ Թ. Թորամանյանի)

Մեր «Զվարթնոց» աշխատությունում (1963 թ.) զետեղված է երկու գծագիր՝ 1ա և 26՝ «Զվարթնոցի հնարավոր ճակատ՝ կազմված Թորամանյանի վերակազմության նախագծի, Փարիզի Սեն Շապելի հարթաքանդակի և Գագկաշենի մոդելի հիման վրա» մակագրությամբ։ Այդ գծագրերում շինության երկրորդ և երրորդ աստիճաններում պատուհաններն ունեն կլոր պարագծեր, ինչպես որ Գագկաշենի մանրակերտում և

Սեն Շապելի հարթաքանդակում է, մինչդեռ Թորամանյանը իր վերակազմության մեջ պատուհանները պատկերել է երկարած համաչափություններով։ Սա նշանակում է, որ նա թեև օգտագործել է մտապատկերները, սակայն զոհ չի գնացել դրանց, առավելապես հիմնվել է ավերակի տվյալների վրա։ Եվ Թորամանյանի վերակազմությունն ավելի հավանական է. եկեղեցու ճակատն ավելի տրամաբանական է, ամբողջությունը՝ ներդաշնակ։ Չպետք է մոռանալ, որ քանդակներում ու մանրակերտերում պայմանականություններն զգալի են լինում։

Երկրորդ օրինակը հետևյալն է. Ա. Մանուչարյանի՝ Զվարթնոցին նվիրված հոդվածում ներկայացված է «Կամբյուսեսի դատավճիռը» նկարը։ Այն ցուցադրված է Գդանսկ քաղաքում, Արտուսի պալատական պատկերասրահի հոլանդական արվեստի դահլիճում և նվիրված է մ. թ. ա. VI դարի Աքեմենյան Իրանի առավել նշանավոր արքաներից մեկին՝ Կամբյուսեսին։ Նկարի ձախ մասում երկրորդ պլանում երևում է մի շինություն, որի ընդհանուր պատկերն ու մանրամասները համընկնում են Զվարթնոցի թորամանյանական վերակազմությանը՝ լայնության ու բարձրության զգալի տարբերությամբ։ Հոդվածի հեղինակը նկատում է, որ նկարում վերարտադրված է Զվարթնոցի պատկերը. ըստ նրա՝ նկարը պետք է վերագրել XV դարին, իսկ Զվարթնոցի պատկերը նկարչին է հասել տարբեր հնարավոր ճանապարհներով։ Վերոհիշյալն ինքնին նշանակալից վկայություն է, բայց կա մեկ այլ հետաքրքիր իրողություն ևս. այս շինության երրորդ աստիճանը, որ գմբեթաթմբուկն է, ունի երկու շարք պատուհաններ, մինչդեռ Թորամանյանի հանրահայտ վերակազմության ճակատի երրորդ աստիճանում՝ գմբեթաթմբուկում, պատուհանները միաշարք են։ Կարելի է եզրակացնել, որ Թորամանյանը չի հետևել հոլանդացի նկարչի ստեղծած պատկերին, այլ հիմք է ընդունել իր վերակազմած ճակատի՝ դասականորեն տրամաբանված, պարզ ու հստակ համաչափությունները, որոնք այնքան հատուկ են հայ ճարտարապետության ավանդույթներին։

Պարզվում է, որ Թորամանյանը Զվարթնոցի վերակազմությունը նախագծելիս փորձեր է արել, մշակել տարբերակներ՝ ձգտելով հասնել ամենահավանականին։ Այդ տարբերակներից մեկը նման է հոլանդական նկարում առկա շինության գմբեթաթմբուկին՝ Թորամանյանի տարբերակում ևս պատուհանները երկշարք են։ Սա չի՞ նշանակում, արդյոք, որ Թորամանյանը ծանոթ է եղել հոլանդացի նկարչի ստեղծագործությանը, այնտեղ տեսել է հարազատ, սրտամոտ գծեր, որոնք երկար ժամանակ պահպանվել են նրա հիշողության մեջ։ Ի պատիվ գիտնականի, այս առիթով ևս պետք է նշել, որ նա առաջնորդվել է ճիշտ ճանապարհով. դրա ապացույցը նախ և առաջ Գագկաշենի մանրակերտն է՝ միաշարք պատուհաններով գմբեթաթմբուկով։

Հետաքրքիր է, որ մեծ ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանը իր գլուխգործոցներից մեկը՝ Կառավարության տան ճակատի (Նալբանդյան փողոցին հա-

րող) որմնամույթերի մշակման ժամանակ ակներևաբար մտապատկերում ունեցել է միջնադարյան Անիի պալատական եկեղեցու որմնասյունը, թեև Թամանյանի ստեղծագործածը անհամեմատ բարձրակարգ ու չգերազանցված, նախապատկերը գրեթե չհիշեցնող ստեղծագործություն է։

Թեև Զվարթնոցի՝ Թորամանյանի վերակազմության նախագիծ վաղուց ի վեր արժանացել է համընդհանուր ճանաչման, և տաճարն այդ վերակազմությամբ է ամրակայվել մարդկանց պատկերացումների, առավել ևս՝ գրականության մեջ, անցած տասնամյակների ընթացքում երբեմն-երբեմն այդ վերակազմությանը իրենց անհամաձայնությունն են հայտնել տարբեր հետազոտողներ՝ նույնիսկ ներկայացնելով նոր, որոշ դեպքերում նախորդից էապես տարբեր վերակազմություններ։

Զվարթնոցի՝ Թորամանյանի վերակազմության առաջին վիճարկողը եղել է հուշարձանի պեղումները նախաձեռնող Խաչիկ Դադյանը։ Որպես նրա անհամաձայնության վկայություն, մեզ են հասել Թորամանյանի կազմած Զվարթնոցի կտրվածքի և ճակատի այն գծագրերի լուսանկարները, որոնցում գմբեթային մասը չկա։ Դրանք դեռ այն ժամանակ կտրել էր Դադյանը՝ համոզված լինելով, որ ավելորդ են, քանի որ, իբր, հայկական եկեղեցիները կրկնակի գմբեթ չեն ունեցել, այսինքն՝ չեն եղել եռաստիճան։

Դադյանը ի վերջո համոզվեց, որ Թորամանյանը ճշմարտացի է, երբ տեսավ Նիկողայոս Մառի պեղումներով հայտնաբերված Գագկաշենի մանրակերտի և Զվարթնոցի՝ Թորամանյանի վերակազմության միակերպությունը։ Չ՞է որ, համաձայն X-XI դարերի հայ մատենագիր Ասողիկի՝ Գագիկ թագավորն իր տաճարը կառուցել էր Զվարթնոցի չափերով և ճարտարապետությամբ։

Մեսրոպ արքեպիսկոպոս Տեր-Մովսիսյանը, որ Զվարթնոցի պեղածո նյութերի առաջին հրապարակողն էր, Թորամանյանի վերակազմության հավաստիությունը ստուգելու համար Էջմիածին է հրավիրում հայտնի ճարտարապետ Քրիստափոր Տեր-Սարգսյանին։ Վերջինս սկզբնապես անհամաձայն լինելով Թորամանյանի վերակազմությանը և ժամանակ անց լսելով նրա բացատրությունները, Թորամանյանի խոսքերով ասած՝ «… լիովին ընդունելով ներքին հարկերու վերաբերյալ բոլոր ցուցմունքներս միայն անհամաձայն եղավ ինձ հետ գմբեթի կազմության մասին»։

Ա. Կուզնեցովը 1951 թվին հրատարակած «Կենտրոնագմբեթ շինությունների տեկտոնիկան և կոնստրուկցիան» աշխատության մեջ, ի թիվս աշխարհի շատ նշանավոր հուշարձանների, անդրադարձել է նաև հայ ճարտարապետության մեծ թվով կենտրոնագմբեթ տաճարների, այդ թվում և՝ Զվարթնոցի ընդհանուր հորինվածքային ու տեկտոնիկական կազմության քննությանը։ Կուզնեցովի համոզմամբ «… Զվարթնոցի ճարտարապետի ստեղծագործական համարձակ մտահղացումը չի համապատասխանել դարաշրջանի տեխնիկական գիտելիքների մակարդակին»։

Ա. Կուզնեցովը մեկ անգամ է եղել Զվարթնոցում և ժամանակի սղության պատճառով հնարավորություն չի ունեցել հուշարձանն ուսումնասիրել առավելագույն չափով, և նրա քննությունը հիմնվել է ավելի տեսական, քան կոնկրետ, իրական փաստերի վրա։

Զվարթնոցի ճարտարապետը նախօրոք նպատակադրված է եղել համադրել խաչաձև կենտրոնն ու բոլորակ արտաքինը՝ դրանով իր քաղաքական հայացքները մարմնավորելով գեղարվեստական ստեղծագործության մեջ։ Թորամանյանն այս առիթով գրում է. «Ներսես Գ Շինող արևմուտքեն բերավ Զվարթնոցի բոլորակը՝ …ուզեր է այդ երկու դավանության (լուսավորչական և քաղքեդոնական-Տ.Մ.) եկեղեցիներն ալ միմյանց մեջ ձուլել… անոր ճարտարապետը հայկական նվիրագործված խաչաձևը հունական բոլորակին հետ ներդաշնակորեն պատշաճեցնելու համար արտակարգ հանդգնության հետ եզական հանճար ի գործ դրեր է ի մեծ զարմացումն այսօրվա մեր գիտական աշխարհին»։

Տարիներ առաջ Զվարթնոցի նոր վերակազմություն է հրապարակել Ստ. Մնացականյանը։ Այդ վերակազմության հիմքում, փաստորեն, ամբողջությամբ Ա. Կուզնեցովի վերակազմական առաջարկությունն է։ Այդ վերակազմությամբ հեղինակը փորձում էր ժխտել տաճարի վերնահարկի գոյությունը, տաճարի երկրորդ աստիճանը պատկերում էր խաչաձև, իսկ բարձրությունը՝ 10 մետրով ցածր և այլն։

Զվարթնոցի ընդհանուր հորինվածքի և ներքին կազմության հարցերին անդրադարձել է նաև պրոֆ. Ա. Յակոբսոնը՝ 1950 թվին հրատարակված «Ակնարկ V-XVII դարերի հայ ճարտարապետության պատմության» գրքում, ինչպես և 27 տարի անց, 1977 թվին, Ստ. Մնացականյանի՝ 1971 թվին հրատարակված «Զվարթնոց» աշխատության գրախոսությունում։

Զվարթնոցը գրավել է նաև ԱՄՆ-ի Բլումինգտոնի համալսարանի պրոֆեսոր Յուջին Կլեյնբաուերի ուշադրությունը։ Գիտնականը 1978 թվին Երևանում տեղի ունեցած հայ արվեստին նվիրված միջազգային երկրորդ գիտաժողովում ներկայացրեց իր կարծիքը Զվարթնոցի, մասնավորապես՝ նրա վերակազմությունների մասին։ Այդ կարծիքը, ըստ էության, վերակազմության առաջարկ էր, սակայն առանց գծագրերի, որոնք, համաձայն հեղինակի խոստման, ներկայացվելու էին ապագայում, թեև մինչ օրս չեն ներկայացվել։ Կլեյնբաուերի կարծիքով՝ հիմքեր չկան ենթադրելու, որ Զվարթնոցը եղել է եռաստիճան, ունեցել է վերնահարկ, արտաքին պատերն ունեցել են այդքան շատ պատուհաններ, բարձրությունը եղել է 45 մետր և այլն։ Զվարթնոցի մասին նրա քննարկումներում զգացվում է նրա անտեղյակությունը մի շարք իրական փաստերին և այլն։

Զվարթնոցի վերաբերյալ կարծիքներ են հայտնել էլի շատերը, որոնք չմանրամասնելով, պիտի անհրաժեշտ համարել հնարավորին չափ անդրադառնալ հուշար-

ձանի մասնակի վերականգման, ավելի ճիշտ՝ հուշարձանի կոնսերվացման նախապատրաստման գործին, որն իրականացվում է ՀՀ պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության վարչությունը: Պետք է արժանին մատուցել հիշյալ վարչությանը, որը տարիների ընթացքում առանձնակի ջանասիրությամբ բարեկարգել է Զվարթնոցի շրջապատը՝ ծառապատել, կանաչապատել է հուշարձանի ողջ տարածքը, կառուցել մոտեցման ճանապարհ, բուն հուշարձանի ստորին մասում վերականգնել խորանների սյունաշարերը և ավագ սեղանի պատը: Արվել է թերևս ավելին, քան անհրաժեշտ է կոնսերվացման համար: Դա կարող է նույնիսկ խանգարել երբևէ հուշարձանը ամբողջությամբ վերականգնելու ժամանակ. երազանք, որի իրագործումը մեր օրերում դժվար է: Բայց հուսանք, որ կգա այդ ցանկալի օրը:

Տիրան Մարության

«Գիտություն և տեխնիկա», 2000, թիվ 4-6, էջ 20-25: